ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
առողջության կենտրոն

ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մեծ 36ա.՝ (+374 10) 582 711, էլ. փոստ՝ policlinik17@mail.ru

№ 012/274

« 24» սեպտեմբեր 2025թ

# Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

**Պայմանագիրը միակողմանի /որոշ չափաբաժինների մասով/ լուծելու մասին**

<< ՏԻԳՐԱՆ ՄԵԾ >> ԱԿ ՓԲԸ -ի (այսուհետ՝ Գնորդ) և «Էքստրա Մոտորս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 08.04.2025 թվականին կնքված << ՏՄԱԿ-ԳՀԱՊՁԲ-25/08-ԲՍ-2 >> ծածկագրով Բժշկական սարքավորումների մատակարարման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Գնորդը Վաճառողի էլեկտրոնային փոստին 13"05"2025թ և 28"07"2025թ ծանուցման միջոցով պատվիրել է մատակարարել 2-րդ չափաբաժնով նախատեսված բժշկական սարքավորումը՝ Սպեկտրոֆոտոմետրը, սակայն Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետներում որևէ մատակարարում տեղի չի ունեցել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի

«միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վերոգրյալը հաշվի առնելով, Գնորդը որոշում է միակողմանի լուծել Պայմանագիրը՝ 2-րդ չափաբաժնի մասով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Վաճառողին սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 120000 ՀՀ դրամ և 80000 ՀՀ դրամ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ-ի <<Արարատբանկ>>ԲԲԸ-ի 1510036375510100 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի, 6-րդ ենթակետի ա/ կետի համաձայն՝ անձը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է, եթե «խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

Տվյալ դրույթը հաշվի առնելով՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ-ի <<Արարատբանկ>>ԲԲԸ-ի 1510036375510100 հաշվեհամարին փոխանցել վերը նշված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները, հակառակ դեպքում Վաճառողը, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Վաճառողի տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ԱԿ ՓԲԸ-ի

ՏՆՕՐԵՆ՝ Ս"ԲԱԴԱԼՅԱՆ